Անհրաժեշտ է պահել այս թերթիկը ակտեմրա դեղի վերջին ներարկումից հետո նվազագույնը երեք ամսվա ընթացքում, քանի որ կողմնակի երևույթները կարող են ի հայտ գալ ակտեմրա դեղի վերջին ներարկումից որոշ ժամանակ անց: Եթե դուք, կամ Ձեր երեխան ընդունել եք ակտեմրա դեղը և զգացել եք որևէ կողմնակի ազդեցություն, ապա կապ հաստատեք Ձեր բուժող բժշկի հետ՝ խորհրդատվություն ստանալու համար.
_____(բժշկի հեռ. համարը):

Ակտեմրա դեղով բուժման օրերը.*

Սկիզբը .....

Վերջին ներերկման ամսաթիվը .....

Ներարկման ուղին. Ներերակային (Ն/Ե)

Ն/Ե

Հաջորդ ներարկման ամսաթիվը .....

* Համոզվե՛ք, որ բժշկի յուրաքանչյուր այցի ժամանակ Ձեզ հետ է այլ դեղերի նշանակման թերթիկը:

Կոնտակտային տվյալներ

Հիվանդի անունը .....

Բժշկի անունը .....

Բժշկի հեռ. համարը .....

Ակտեմրա դեղի զգուշացման թերթիկ

Այս զգուշացման թերթիկը պարունակում է դեղի անվտանգության վերաբերյալ կարևոր տեղեկատվություն, որը Դուք պետք է իմանաք մինչ ակտեմրա դեղով բուժման սկսելը, բուժման ընթացքում և դրա ավարտից հետո:

- Ցույց տվե՛ք այս թերթիկը ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ այլ բժշկի, ով ներգրավված է Ձեր երեխայի բուժման կամ խնամքի մեջ

Ստորև ներկայացված նյութերը պարունակում են կարևոր տեղեկատվություն Ձեր երեխայի ակտեմրա դեղով բուժման մասին: Խնդրում ենք ընթերցե՛լ դրանք.

- *Ի՞նչ պետք է իմանաք դուք հիվանդի համար նախատեսված ակտեմրայի գրքույկի մասին,*
- *Ակտեմրա դեղի ներդիր թերթիկ,*
- *Հավելյալ տեղեկատվություն օգտագործման ցուցումների վերաբերյալ:*

Վարակներ

Ակտեմրա դեղը բարձրացնում է ինֆեկցիոն հիվանդություններով վարակվելու հավանականությունը, որը կարող է դառնալ լուրջ, ընդհուպ մինչև մահվան պատճառ: Դուք չպետք է՛ ստանաք ակտեմրա, եթե ունեք սուր ինֆեկցիոն հիվանդություն:

- **Դիմե՛ք բժշկի օգնությանը, եթե Ձեր մոտ զարգացել են վարակի հետևյալ նշաններ.**
    - Ջերմություն
    - Երկարատև հազ
    - Քաշի կորուստ
    - Կոկորդի ցավ կամ կոկորդի հիվանդություն
    - Հնոց
    - Մաշկի գունավորում, կարմիր մաշկային բծեր, վերքեր
    - Թուլություն կամ հոգնածություն
- Դիմե՛ք բժշկի, եթե Ձեր կամ Ձեր երեխայի մոտ նկատվում են նշաններ (շարունակական հազ, քաշի կորուստ, ցածր կամ բարձր ջերմություն), որոնք հնարավոր է լինեն տուբերկուլոզի նշաններ, որը կարող է զարգանալ ակտեմրա դեղով բուժման ընթացքում: Դուք, կամ Ձեր երեխան պետք է հետազոտվեք տուբերկուլոզի ակտիվ ձևի հայտնաբերման համար, մինչև ակտեմրա դեղով բուժման սկսելը;
- Խոսեք Ձեր բժշկի հետ, եթե դուք կամ Ձեր երեխան պետք է պատվաստվեք ակտեմրա դեղով բուժումը սկսելուց առաջ;
- Ճշտեք Ձեր կամ Ձեր երեխայի բժշկի հետ, թե արդյոք դուք պետք է ուշացնեք ձեր հաջորդ ներարկումը՝ ինֆեկցիոն հիվանդությամբ վարակված լինելու պատճառով
- Փոքր երեխաները, ովքեր հիվանդ են պոլիարտիկուլյար յուվենիլ իդիոպաթիկ արթրիտով (պՅԻԱ) կամ համակարգային պատանեկան իդիոպաթիկ արթրիտով (հՅԻԱ), չեն կարող խոսել իրենց հիվանդության նշանների մասին: Նրանց խնամող ծնողները անհապաղ պետք է դիմեն բժշկի, եթե երեխայի մոտ նկատեն վիճակի վատթարացում առանց պատճառի:

Ալերգիկ ռեակցիաներ

Հիմնական ալերգիկ ռեակցիաները տեղի են ունենում ակտեմրա դեղի ներարկումից սկսած 24 ժամվա ընթացքում, չնայած նրան, որ ալերգիկ ռեակցիաները կարող են լինել ցանկացած ժամանակ: Ակտեմրա դեղի ներարկման հետ կապված եղել են լուրջ ալերգիկ ռեակցիներ, ներառյալ անաֆիլաքսիա:_Այսպիսի ռեակցիաները հնարավոր է լինեն բավականին ծանր, ընդհուպ մինչև մահ, այն հիվանդների շրջանում, որոնց մոտ նկատվել են արդեն իսկ ալերգիկ ռեակցիաներ ակտեմրայի նախորդ ներարկման ժամանակ: Ակտեմրայի ներերակային բուժման ընթացքում դեղի հետգրանցումային շրջանում հաղորդվել է մահացու անաֆիլաքսիայի վերաբերյալ:

Ն/Ե ներարկում (հիվանդանոցում)
Ներարկման ընթացքում, Ձեր բժիշկը կամ քույրը պետք է հետևի ալերգիկ ռեակցիայի հայտնաբերման համար
Եթե նկատվի անաֆիլակտիկ, կամ այլ լուրջ ալերգիկ ռեակցիա, ակտեմրա դեղի ներարկումը պետք է անհապաղ կասեցնել, համապատասխան բուժում նշանակել և դեղի ընդունումը դադարեցնել:

- Անհապաղ դիմեք բժշկական օգնության, եթե Դուք նկատեք ալերգիկ ռեակցիայի հետևյալ նշաններից որևէ մեկը.
  - Ցան, քոր կամ եղնջացան
  - Հնոց կամ շնչառության վատացում
  - Շրթունքների, լեզվի կամ դեմքի այտուց
  - Ցավ կրծքավանդակի շրջանում
  - Գլխապտույտ կամ գունատում
  - Սրտխառնոց կամ ստամոքսի ցավ
  - Արյան ճնշման անկում

Եթե Ձեզ մոտ եղել է ալերգիկ ռեակցիա ակտեմրա դեղի ներարկման ժամանակ, մի՛ ընդունեք դրա հաջորդ ներարկումը առանց բժիշկի թույլտվության:

Դիվերտիկուլիտների բարդացում

Ակտեմրա դեղով բուժման ընթացքում հնարավոր է դիվերտիկուլիտների բարդացում, որն էլ ավելի կարող է բարդանալ, եթե չբուժվի:

Դիմե՛ք անհապաղ բժշկական օգնությանը, եթե Ձեր կամ Ձեր երեխայի մոտ նկատվեն ստամոքսի ցավ կամ աղիների բորբոքում, կամ եթե նկատվի արյուն կղանքի մեջ:

- Տեղեկացրե՛ք Ձեր բժշկին, եթե դուք կամ Ձեր երեխան ունեք աղիքի խոցային հիվանդություն կամ դիվերտիկուլիտ:

Կողմնակի ազդեցության մասին հաղորդելը

Եթե դուք նկատել եք որևէ կողմնակի ազդեցություն, խոսե՛ք Ձեր բժշկի, բուժքրոջ կամ դեղագետի հետ, նաև այն դեպքերի մասին որոնք ներառված են ներդիր թերթիկի մեջ:

Դուք կարող եք նաև հաղորդել Ֆարմատեք ՓԲԸ-ի դեղերի անվտանգության բաժին բջջ. հեռախոսահամարով. +374 91 796688, կամ էլեկտրոնային հասցեով. gayaneh.ghazaryan@gmail.com կամ ուղղել Ձեր հաղորդագրությունը ՌԴ-ում Հոֆֆմանն Լյա Ռոշե ընկերության ներկայացուցչությանը՝ դեղերի անվտանգության բաժին, էլեկտրոնային հասցեով moscow.ds@roche.com, բջջ.հեռ. +7-495-229 2999, ֆաքս. +7-495-229 7999 կամ կայքով. www.roche.ru.

Հաղորդելով կողմնակի ազդեցության մասին, տրամադրելով հավելյալ տեղեկատվություն, դուք կարող եք օգնել այս դեղամիջոցի հետագա անվտանգ կիրառմանը:

Վահան Արուշանյան, Ֆարմատեք ՓԲԸ տնօրեն

Ստորագրություն _____

Ամսաթիվ 10.05.18

Գայանե Ղազարյան, Ֆարմատեք ՓԲԸ-ում

Հոֆֆմանն-Լյա Ռոշե ընկերության դեղերի անվտանգության պատասխանատու

Ստորագրություն _____

Ամսաթիվ 10.05.18